

առ կայութեա ըմաց, սկզբ նյօսուն մաս ա ճանապահ է առց առ

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱԲԿՆԵՐ

II.

ՍԻՐՈՅ ԵՒ ՎԵՏԻ ԵՐԳԻ ՀԸ

(Սմբատ Շահագիզի մահուան առքի)

Ա Առանց լիածեան աղատութեան

Չկայ լիածեան և կեանք երջանիկ:

Ա. Շահագիզ

I.

ՄԵՆՔ ԹԱՂՈՒՄ ԵՆՔ

1907 թուականը մեր գրականութիւնը վերջացրեց յուղարկաւորութեամբ։ Հեռու Մոսկուայում՝ յանկարծամահ չեղաւ 67 տարեկան հասակում, բայց գեռ բաւականին առոյգ և հոգեւով գեռ երիտասարդ—Սմբատ Շահագիզը։

Մեռաւ նես լսեցի մի անոյշ ձայնաի, «Ազնիւ ընկերուի հեղինակը, մեռաւ «Լեռնի վշտի» երգիցը, վաստակաւոր մանկավարժը, ազնիւ հայրենասերը, լաւ մարդը։

Անշուշտ հազիւ մի հայ գրագէտ գտնուի, որ չիմանայ կամ լսած լինի նրա «Ես լսեցին» կամ «Ազնիւ ընկերը». ուր չեն երգել և կամ նոյն իսկ այժմ էլ չեն երգում այդ երգերը։ Աւելի քիչ մարդ ծանօթ է հանգուցեալի նշանաւոր երկի՝ «Լեռնի վշտի» հետ, որովհետեւ մի անգամ հրատարակուած լինելով 1865 թուականին—նա երկրորդ հրատարակութիւն չի ունեցել, օրինակները սպառուել են և այս րոպէին մեր գրականութեան հազուագիւտ գրքերից մէկն է դառել իր աշակերտների շրջանը նոյնպէս սահմանափակ է, որովհետեւ նա ուսուցչութիւն է արել միմիայն Լազարեան ձեմարանում, թէպէտ և այս հաստատութեանը և մանուկ սերնդի կրթութեանը Շահագիզը նուիրել է երեսուն երկար տարիներ։

Աւելի ևս նեղ էր նրա ծանօթների, մանաւանդ մօտ ժանօթների, ընկեր բարեկամների շրջանը, նա անկեղծ և չխտակ մարդ էր և կարողանում էր մօտենալ և իրան մօ-

տեցնել միմիայն իր այն ծանօթներին, որոնց ազնւութեան վերայ նա լիովին վատահացած էր։ Մսսկուայում նրա շրջանը կազմել են Ա. Նազարեան, Մ. Նալբանդեան և առ հասարակ «Հիւսիսափայլի» բարեկամները։ Յետոյ երբ այդ շրջանը անհետացաւ—նրան կարելի էր տեսնել ձեւմարանից դուրս կամ ակմբանոցում, կամ Ժահմարեանների ու Տէր Յակոբեանների ընտանիքներում։ Իր աշակերտներից նա շատ քշերին էր մօտեցնում իրան։ այդ «ընտրեալների» թւում գտնուում էին Յ. Յովհաննիսեանը, Մ. Բարխուդարեանը, Ա. Մամիկոնեանը։

Մի ժամանակ Ա. Շահաղիզի մշտական այցելուներն էին բանաստեղծ Ա. Մատուրեանը, Խւր. Վեսելովսկին և տողերիս գրողը։ Եւ ահա այդ մաերմութիւնը, և ի հարկէ նրան աշակերտելս, ինձ իրաւունք է տալիս ասելու, որ Ա. Շահաղիզը թէպէտ և բաւականին յամառ և անձնասէր, բայց վերին աստիճանի համակրելի, ազնիւ և շիտակ անձնաւորութիւն էր, և ամենայնիւ իրաւունք ունէր 1864 թ. ասելու։

«Անդաւաճան, ջերմ սիրով
«Ես սիրել եմ իմ հայրենիք»

և տասնեակ տարիներ անցած կրկնելու։

« . . . Բայց թող հայկական որդիքն իմանան
Որ իմ սուգո նոցա վիճակն է եղել։

Որ երբէք վախլուկ զինւորի նման

Թշնամուս առջև վահան չեմ ձգել։

Զեմ երկրպագել ես ոսկի հորթին

Եւ ոչ կուռքերին պաշտել օտարին։

Այլ միշտ հոգեոր կարօտ ծարաւի

Տուել եմ արժանն ամեն մի մարդին։

Զեմ տաշել գագաղ, և մատաղ կեանքի

Կանաչ ծառի պէս ծաղկել են յոյսեր։

Սըսկել եմ դրանց ջըով կենդանի

Որ գալոց ազգին լինին պիտանի։

II.

Սիրոյ եւ վշտի երգիշ անուանեցի ես Ա. Շահաղիզին։
Եւ ճիշդ՝ ուր որ սէր է—այնտեղ և վիշտն է անպակաս։

և ուր է վարդը առանց փշերի . . . Մով վշտի աղբիւրը միթէ սէրը չէ. հարկաւոր է սիրել—տանջուելու համար. սիրելուց է, որ մենք կարեկցում ենք ուրիշին:

Հանգուցեալի բոլոր բանաստեղծութիւնների մէջ կարմիր թելերով անցնում են այդ երկու՝ զգայուն սրտին յատուկ—զգացմունքները։ Սիրոյ երգերով է սկսում նա իր բանաստեղծական ուղին. սիրոյ գեղեցիկ մեղեդիներ է հնչեցնում նրա քնարը 60-ական թուականներին. սիրոյ բուռն զգացմունքով Փառնասից է իջնում նա և 1891 թուին իր «Անգին գոհար» սիրաբուղիս բանաստեղծութիւնով։

Եւ միենոյն ժամանակ որքան վիշտ, որքան արցունք այդ սիրոյ բաժակի մէջ։ Այո, սիրոյ բոլոր արտայայտութիւնները և ելեէջները նրան ծանօթ են և տեղ են գտնում նրա քնարի լարերի վերայ. Եթէ նո գիտէ անձնուրաց և անհուն սիրով կապուել սիրած էակի հետ, աւելի ևս ջերմ և վեհ զգացմունք է նրա որդիական սէրը դէպի մայրը. բաւական է, որ նա գրել է

«Ես լսեցի մի անոյշ ձայն»-ը։

Բայց ոչ պակաս նա ընդունակ է հրապուրուել և բնութեան գեղեցկութեամբ ու նրա հրաշագեղ գրկում իր վշտերի անդորրութիւնը գտնելու նուրբ ճաշակի տէր, միշտ զգայուն դէպի ամեն տեսակ գեղեցկութիւն՝ նա չի կարող անտարբեր լինել դէպի ամենավեհ և վսեմ գեղեցկութիւնը—քնութիւնը. և բնութեան նկարագիրները նրա գրուածքը ներում միշտ գունաւոր, միշտ ոգիացած են գուրս եկել.

Բայց ով որ ընդունակ էր լսել

« . . . խոր հառաջանք

Եւ վիշտ հոգու, և գանգտոտ.

Եւ լաց, և սուգ, և ազաշանք»

նա չէր կարող անտարբեր գտնուել դէպի այդ արցունքների աղբիւր—ժողովուրդը, ազգը։ Իր սեփական անձնական վիշտը նա ձուլում է իր եղբայրակիցների դառն տանջանքների ու հեկեկանքների հետ ու դառնում է «Լեռնի վշտի» անմոռանալի երգիչը։

III.

«Եւսնի հոգին, որ այնքան ցաւով
Ատում է հանդիստ, նման է կեանքին
Հարազատ աղքի, որ լի բաժակավ
Ճաշակում է թոյն դադաղի կողքին»:

Հեղինակի այս բնորոշումին աւելացնենք Մ. Նալբանդեանցի արտասանած խօսքերը՝ «Եւսնի վիշտը—և իմ վիշտն է», իսկ թէ Նալբանդեանը որ չափով էր առնջւում աղքի ցաւերով—այդ մենք լու գիտենք, Ա. Շահհազիպը—նրա ընկերը և գաղափարակիցը—գալիս է հաստատելու և ասում է նրա մասին.

«Արտիդ կոկիծը—կոկիծ է աղքի»:

60-ական թուականների լաւագոյն հայերի վիշտն է, որ պաշարել է Լեռնին և աղքային ճակատագրի ողբասաց և մարգարէ գարձրել:

Բայրընի և Պուշկինի աղքեցութեան տակ հայ բանաստեղծը ընտրում է պոէմայի ձեր և չօրս երգերի մէջ պատկերացնում է հայրենիքի գրութիւնը՝ գեղեցիկ բնութիւն—տգէտ և աղքատ բնակիչներով, փառաւոր անցեալ և ներկայումս ստրկական կեանք:

Լեռնը Զայլտ Հարոլդի նման թախիծը սրտին ճանապարհորդում է հայրենի վայրերում և ինքը անձամբ ականատես է լինում հայի խղճութեան և տգիտութեան, ժողովրդի անմիաբանութեան, հարուստների անհոգութեան, վարժապետների անպէտքութեան, աղքասիրութեան պակասութեան։ Հայը թմրած է, կարծես անկենագան դիակ լինի Լեռնի առաջին տարածուած։ Լեռնը մերժւաց է լինում տեսնելով այս տիսուր, յուսահատեցուցիչ պատկերը, մերթ շանթեր է արձակում աղքի ներքին և արտաքին թշնամիների դէմ։ Նա գիմում է հասարակութեան բոլոր խաւերի ներկայացուցիչներին և ոգեսրուած ճառերով աղքային գործունէութեան գեղեցիկ ծրագիր է արձարծում։ «Հիւսիսափայլը բոլոր գաղափարները յանձին Լեռնի գտնում են համոզուած մի փաստաբան և տաղանդաւոր ժողովրդականացնող»

Նա խօսում է այնպիսի մի վեհ աղքասիրական ոգւով լցուած, այնպիսի անկեղծութեամբ, որ իր ձայնը լսելի է դարձնում ամբողջ աղքին. Եւ երբ մի բոպէ սկսում է տատանուել, թէ իր ծրագրած կուլտուրական գործունեութիւնը գուցէ չհասնի իր նպատակին, նա ռազմական փողեր է հնչում և մեր յուսահատ հայ Լէօպարտին պատրաստութիւն է ցոյց տալիս արիւնահեղ կոռուի ասպարէզ նետուելու.

Եւ միթէ ոչ ոք քո զաւակներից

Փայլատառելու շէս սուսերը ձեռին,

Փոթուիկ, հրդեհ վերտուոր կուրծքից

Անվախ թափելով ոսօնի դնդին:

Պատկառելի կին, մայր մեր նետահար,

Այրիսութեաւ մէջ անպատիւ եղած.

Աչքերում արիւն, մազերն անյարդար . . .

Ապամակոծ է, այնքոյժ խօցուածուած:

Մի վեր կաց, կանգնիր աշխարհ Հայաստան.

Մի թափ առոր ուժով, թող ճեղքուին կտպանը.

Ահա մեզ արիւն իմ նուիրական,

Թող ցողեն դաւերդ փրկութեան նոսան:

Ցոյց ոչ կուլտուրական գործունեութեան կոչը և ոչ էլ յեղափոխական կռուի հրաւէրը կարող չեն կետնքի մէջ իսկոյն և իսկ արձագանք գտնել. Հարկաւոր են երկար ու ձիգ տարիներ, հարկաւոր են այդ գաղափարներով կը թուած սերունդներ. Այդ տարիները եկան և անցան, հին սերունդներին փոխարինեցին նորերը, որոնց ճանապարհը հարթուած էր արդէն և գործունեութեան ծրագիրը կազմուած:

Այդ նոր, մատազ սերնդի վերոյ էր հանգուցեալի բոլոր լոյսը. նրան էր նա դիմում և 60-ական թուականներին, նրան էր դիմում նա և վերջին տարիների հրապարակախօսութիւնների ու բանաստեղծութիւնների մէջ. Երիտասարդութիւնը փորձեց իր ուժերը Լեսնի ցոյց տուած թէ առաջին և թէ երկրորդ ասպարէզների վերայ, բայց թէ աղքը ինչ շահեց—այդ ուրիշ հարց է. Բանաստեղծը ինքը ականատես էր, ինչպէս

• • • Գարնանոցին ծաղկազարդ գաշտեր
Փոխուեցին կորմիք, կապոյտ ծիրանի:
Կարմիք փոխուեցին ծովի ալիքներ,
Դաշտախիլ դարձաւ այգին հայրենի • • •

Մուայլ է և տխուր նոր սերնդի եղիջների քնարը:

Ա. Շահազիզի աշակերտ և շարունակողը մեր գրա-
կանութեան մէջ Յ. Յովհաննիսեանը յուսախար լալիս է
Սև մութ պատեց աշխալհին,
Սար ու ձոր գառան արին,
Մեզ վայ բերեց այս տարին • • •

Իսկ Ա. Ծատուրեանը ստիպուած է հառաջել ու ողբալ՝
Դառն է մեր կեանքը, տխուր մեր օրեր
Մեզ կաշկանդել է բանութեան շղթան • • •

Թոյլ ուժերի կուլտուրական գործունէութիւնը, մի կաթիլ
ջրի նման ովկիանոսի մէջ, կորչում է մեր ծով դարձած
կարիքների մէջ: Առաջուայ նման տիրում է վհատեցուցիչ
խաւար և հայ պանդխարի բերնից նոյն սղբն է լսում՝
Սիրտս նման է էն միւած աներ
Կոտրեր գերաններ, խախտեր է սըներ.
Բուն պիտի դնեն մէջ վայրե հաւքեր • • •

* * *

Վառ յոյսերով և ոսկի երազներով ոգեսրուած իդէալիստի
համար իր կեանքի վերջալուսին տեսնել այս տխուր պատ-
կերը—ահ դառն էր, շատ դառն: Բայց լաւատես բանաս-
տեղծը վհատել չգիտէր և, զսպելով իր անհուն վիշտը-
սիրտ է տալիս մեզ մարգարէական խօսքերով՝

Փայլեց արևելք նոր արշալուսով,
Անհետ չքացաւ և ժանդ հնութեան.
Նորոգման ոգին, կեանք աւետելով,
Արթւնից կըռեց պսակ յաղթական.
Նահատակները փոխուեցին գետնին.
Գետինը կակդեց նոր սերմի համար,
Նոր գործը մնաց մեր նոր սերնդին.
Եւ այսուհետեւ առաջ անդադար:

Ահա լուսածին և մանուկն եկաւ
Գեղեցիկ, որպէս աղատ ինցն Աստուած,
Արարիչ բազկով շինել սկսաւ
Աղգապահութեան հրաշալի շինուած:

ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ